

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 25-ի N2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ԳՊՀ-ԱՇՁԲ -12/01

Պատվիրատուն՝ «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Գավառ, Ազատության 1 հասցեում հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ձանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Գավառի պետական համալսարան ՊՈԱԿ-ի կարիքների համար վերանորոգման (կապալային) աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Փաստաթղթային ձևով բաց ընթացակարգի հրավեր ստանալու համար պահանջվում է վճար 2000 դրամի չափով, որը պետք է փոխանցվի «Անելիք բանկ» ՓԲԸ «Պայազատ» մ/ձ 118061043626 հաշվեհամարին: Փաստաթղթային ձևով բաց ընթացակարգի հրավեր ստանալու համար պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում՝ կցելով պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ՝ ք. Գավառ, Ազատության 1 հասցեով, մինչև գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի սկիզբը:

Հայտերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով և ներկայացվեն փաստաթղթային ձևով:

Բաց ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում:

Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ բաց ընթացակարգի սույն հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված 40-րդ օրացուցային օրվա ժամը՝ 11.30-ին, ք. Գավառ, Ազատության 1 հասցեում:

Հաղթող մասնակից կձանաչվի բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հեռ. 0-264-2-42-43:

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ

(հեռ.010-28-20-75)

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում աշխատանքային օրեր են Չորեքշաբթի-կիրակի օրերը ներառյալ